

# ԳԱԻԱՌԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԱՆՈՒՆՆԵՐ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ (mihran.min@gmail.com)

## ՄՈՒՏԾՔ

Յետագայ էջերով կը ներկայացնենք հայ պարբերական մամուլի մատենագիտական ցուցակներուն մէջ չյշատակուած հայերէն 35 նորայայտ թերթեր ու հանդէսներ, բոլորը՝ զաւառային հրատարակութիւններ, լոյս տեսած 1851-1922ի միջեւ, Արեմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ բազմաթիւ աւաններու մէջ՝ Կարին, Վան, Տիարպերի, Մեզիրէ, Սեբաստիա, Շահին Գարահիսար, Կեսարիա, Թամզարա, Ֆենէսէ, Այնթապ, Ուրֆա, Ատարազար, Պարտիզակ, ենք.։

Այս Հանդէսի թ. հատորին մէջ (1981) լոյս տեսած յօդուածով մը տեղեկութիւններ տուած էինք հայ պարբերական մամուլի 33 նորայայտ անուններու մասին, որոնք մինչ այդ դուրս մնացած էին մատենագիտական ցուցակներէ: Անկէ երկու տասնամեակ ետք, նոյն Հանդէսի ի.Ա. (2001) հատորին մէջ, երկրորդ յօդուածով մը տուած էինք նորայայտ թերթերու երկրորդ ցուցակ մը, ուր ներկայացուած էին եւս 33 նոր անուններ: Եւ այսօր, մեր երկրորդ յօդուածէն կրկին երկու տասնամեակ անց, երրորդ յօդուածով մը կը ներկայացնենք ցարդ անձանօթ հայ մամուլի 35 նորայայտ անուններ եւս, այսպիսով անոնց թիւը բարձրացնելով 101ի:

Կը յուսանք որ կեանքը թոյլատու կ'ըլլայ ապագային նոյն ձեւաչափով գէթ անգամ մը եւս հանդէս գալու եւ ներկայացնելու անձանօթ մնացած հայերէն այլ թերթեր ու հանդէսներ:

Աւարտին կ'ուզենք ընել ցաւալի հաստատում մը. որքան ալ զարմանալի, բայց փաստ է որ շատ անտարբեր գտնուած ենք մեր հոգեւոր արժէքները հաւաքելու, մէկտեղելու եւ զանոնք յաջորդ սերունդերուն փոխանցելու մեր աշխատանքին մէջ, եւ փաստ է որ այսօր երբեմն տարիներու կեանք ունեցած եւ հազարաւոր օրինակներով հրապարակուած բազում թերթերէ: ու հանդէսներէ ոչ միայն գէթ օրինակ մը չէ հասած մեզի, այլ նոյնիսկ կ'անգիտանանք անոնցմէ շատերուն անունները կամ անոնց առնչուող բազում մանրամասնութիւններ ու մատենագիտական տուեալներ, ու անոնցմէ շատերուն մասին մեր տեղեկութիւնները կը մնան սահմանափակ ու չեն անցնիր կողմնակի աղբիւրի մը հաղորդած ժաւատ փաստերն ու ակնարկները:

\* \* \*

**«ԱԶԱՏ ՍԵՐ»:** Տիարպերի, խմորատիա թերթ, լոյս տեսած է 1908ի օսմանեան սահմանադրութենէն ետք, տեղւոյն Դաշնակցական Երիտասարդական Կաճախին կողմէ: Ըստ այդ օրերուն Տիարպերի գտնուած հնչակեան գործիչ Սեղրակ Շահէսի, Ազար սէրը լոյս տեսած է «խախտելով հայկական կոհմային սրբութիւնները, սէրը ցոփութեան հասցնելու իրողու-

թեամբ», այնքան որ անոր «քարոյական աւերմունքներէն ուժգնօրէն խոռված էր Տիգրանակերպի հայութինը»<sup>1</sup>:

Այս թերթին հակազդելու համար է որ տեղույն հնչակեանները սկսած են լոյս ընծայել իրենց Ասուա (1910) խմորատիա թերթը<sup>2</sup>:

**«ԱԼԻՍ»:** Սեբաստիա, ձեռագիր երգիծաթերթ: Լոյս տեսած է հաւանաբար 1869ին կամ 1870ին, հազի քանի մը թիւ: Կ'ենթադրուի որ շարունակութիւնն է տեղույն Մամուլին ձագը եւ Մամուլին ձագը Սեբաստիայ արձագանքը զոյգ երգիծաթերթերուն<sup>3</sup>:

**«ԱԼԻՍ»:** Սեբաստիա, Արամեան Որբանոց: Ձեռագիր պարբերաթերթ: Հրատարակութեան նախաձեռնող եւ խմբագիր՝ Շահնազար Քէօթահեան-Օտապաշեան: Որբանոցը գործած է Զինադադարէն ետք եւ փակուած՝ 1922ին, այնպէս որ, Ալիսն ալ լոյս տեսած պիտի ըլլայ նոյն տարիներուն (1918-22): 12 մեծադիր երկսին էջ, տպաքանակ՝ վեց օրինակ: Կողքի գծագրութիւնն ու պատկերազարդումը կատարած է խմբագիրը: Հրատարակութեան քաջալերած է Մերկէր Ալեքսանեանը որ խոստացած է նաեւ աշխատակցի անոր:

Խմբագրականները նոյնպէս գրած է Քէօթահեան: Առաջին թիւի կողքի նկարը եղած է Արամեան Վարժարանի շէնքը, «զոր դիմացի ջաղացքն նայելով գծած էի»: Թերթին աշխատակցած են, վերոնշեալ Ալբանեանէն զատ, որբանոցի բարձրագոյն դասարանի ուսանողները: Հոն տեղ գտած են լուրեր որբանոցէն, շարադրութիւններ, հանելովներ, հարց-պատասխաններ, գիտական նիւթեր, խմբագրին բանաստեղծութիւնները, նաեւ թուրք բանաստեղծ Մեհմէտ Էմինի «Փարոսը» բանաստեղծութեան Քէօթահեանի թարգմանութիւնը<sup>4</sup>:

**[«ԱՆԱՆՈՒՆ ԹԵՐԹ»]:** Թամզարա, Ազգային Արամեան Վարժարան, խմորատիա դպրոցական թերթ, լոյս տեսած օսմանեան սահմանադրութեան տարիներուն, առաջին աշխարհամարտէն առաջ: Խմբագիր հրատարակիչներ՝ Շահնազար Քէօթահեան-Օտապաշեան եւ Տիրան Գասպարեան (տեղույն Արամեան վարժարանի տնօրին Գրիգոր Վահոնիի

<sup>1</sup> Սեղրակ Շահէն, Յուշեր եւ փուշեր կեանքի ճանապարհին. Խարբերդ, Արարկիր, Մալաթիա, Քիլիքիական, Տիգրանակերպ, Տարօն, Ասուն, Բալու եւ Քղի, Ա. հղո., Լոս Անճելըս, Քալիֆորնիա (տպուած Պէյրութ, տպարան Կ. Տօնիկեան), 1975, էջ 63:

<sup>2</sup> Սեղրակ Շահէն, էջ 63:

<sup>3</sup> Երուանդ Փ. Վառեկեան, «Սեբաստիոյ Անցեալէն», Ամանոր, ձեռագիր թերթ, Սեբաստիա, Ա., թիւ 1, 1/13 Յունուար 1914, էջ 1-2:

<sup>4</sup> Շահնազար Քէօթահեան, «Յուշեր եւ նիշեր. անձեր ու անցքեր նախաեղեռնէն մինչեւ ներկայս, Alco Printing Company, Լոս Անճելըս, 1990, էջ 126-131. նաեւ՝ Ծննդավայրից դէպի Տէր Ջօր. Քաջունի Ղարակէօզեանի յիշողութիւնները, ինգան էդուարդի Աւագեան, Էլդրորադո, Կիմրի, 2004, էջ 41:

[Գրիգոր Գասպարեան] փոքր զաւակը): Լոյս տեսած է ընդամենը քանի մը թիւ ու բաղլացած էր «փոքր Եջերէ»: Խմորատիայի մեքենան ապահոված էր Տիրան Գասպարեան<sup>5</sup>:

**«ԱՌԱՔԵԱԼ»:** Կեսարիա, թերթ, խմբագիր՝ Հայկ Ղազարեան: 1910ին, թերթ տպագրական մեքենայ մը թերուած է Կեսարիա, Հայկ Ղազարեան պաշտօնապէս դիմած է կառավարութեան եւ «Ալուքեալ» անունով թերթի մը հրատարակութեան արտօնութիւնը ստացած է: Ան իր թերթով համարձակօրէն քննադատած է «աջ ու ձախ, սկսեալ օրուայ կառավարիչէն մինչեւ դադարանի փաստաքանը ու ազգային շրջանակի մէջ եւս առաջնորդէն մինչեւ վարժարանի փոնօրէնը»: Ղազարեան, թերթին միջոցաւ միաժամանակ երիտասարդութեան մօտ վառ պահած է դպրոցին ու հայ եկեղեցին հանդէպ սէրը<sup>6</sup>:

**«ԱՍՈՒՊ»:** Տիարագեքիր, խմորատիա թերթ, խմբագիր՝ Յակոբ Ղազիկ-եան, հրատարակութիւն Հնչակեան Գրասիրաց Միութեան: Լոյս տեսած է օսմանեան սահմանադրութեան հոչակումէն ետք, տեղլոյն դաշնակցական-ներու Ազար սէր խմորատիա թերթին հակազդելու համար: Ունեցած է «լուրջ» բռվանդակութիւն ու ձաղկած է Ազար սէր խմորատիա հանդէսը, որուն փորձած «բարոյական աւերմունքներէն ուժգնորէն խոռված էր Տիգրանակերպի հայութիւնը»<sup>7</sup>:

**«ԱՐԱՔԵՍ»:** Տիարագեքիր, Ազգային Ս. Կիրակոս բարձրագոյն նախակրթարան: Խմորատիա ամսագիր, «Պատրաստուած» տեղլոյն Ազգային Ս. Կիրակոս բարձրագոյն նախակրթարանի Զ. դասարանի ուսանողութեան կողմէ, 1910:

Արաքը բնութագրուած է որպէս «կոկիկ» թերթ, եւ օրին զայն տեսնող մը հետեւեալ տողերը նուիրած է անոր. «Հաճոյքով կը դիմեմ որ ապագայ խոսքացող ծարքակումներ չեն պակսիր ինը եւս, ինչպէս Գայիսոնի եւ Սասունի ներդաշնակ ուրանաւորները. դիմելու եւ դադելու կշռաւոր զարգացում մըն ալ կը նշմարեմ զանազան հապուածներու մէջ, ինչ որ բարձրացումի ամէնէն կարեւոր գրաւականն է ո' եւ է ուսանողի եւ չափահասի համար ալ: Խիսք թիշ անգամ կը հանդիպամ իսկ դադումներու եւ «թելադրուած» շեղումներու, առաջինները՝ հասուննալու եւ վերջինները՝ կարգաւորելու կարօպոր»<sup>8</sup>:

<sup>5</sup> Քէօթահեան, էջ 22-23:

<sup>6</sup> Հայկ Ղազարեան, Կեսարիոյ նախճիրները. Էջեր օրագրէս, թարգմանիչ՝ Անգելինա Գասպարեան, ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2014, Էլլէն Բիլանդի տուած հեղինակի «Կննսագրութիւն»էն, էջ 7:

<sup>7</sup> Սեղրակ Շահէն, էջ 63:

<sup>8</sup> Լեւոն Մրապեան, «Տիգրիսի ափերէն», Արեւելք, Կ. Պոլիս, 19 Մարտ/1 Ապրիլ 1910 էջ 2 եւ 22 Մայիս/4 Յունի 1910, էջ 2:

**«ԱՐԳԵՌՍ»:** Ֆենեսէ, Ամերիկեան Մենոնայթներու որբանոց-վարժարան: Խմբատիպ ամսաթերթ: Հրատարակութիւն Ամերիկեան Մենոնայթներու որբանոց-վարժարանի արական բաժնին: Խմբագիր՝ որբանոցի ուսուցիչներէն Մարտիրոս Սարգսեան: Անոր աշխատակցած են որբանոցին ուսուցիչներն ու աշակերտները:

Ֆենեսէի Ամերիկեան Մենոնայթներու որբանոցը հիմնուած է Սեպտեմբեր 1910ին եւ հոն գործած է մինչեւ 1914ի աւարտը, այնպէս որ, Արգէռսն ալ լոյս տեսած պիտի ըլլայ նոյն այդ տարիներուն<sup>9</sup>:

**«ԱՐԵԱՆ ԳՈՒՍԱՆ»:** Վան, թոռուցիկ թերթ: Հրատարակութիւն Վանի Դաշնակցական տեղական մարմնին: Լոյս տեսած է մօտաւորապէս 1904ին եւ ունեցած է պատահական հրատարակութիւն<sup>10</sup>:

**«ՔԱԳԱՌԻՉ»:** Արինչ գիտ, Մշոյ դաշտ, ծեռագիր, խմբագիր-հրատարակիչներ՝ Պօղոս Հաճիեան եւ Արմենակ Ալիխանեան, սկզբնաւորութեան թուականը ծանօթ չէ, բայց գիտենք որ դադրած էր 1908ի օսմանեան սահմանադրութենէն առաջ: Թերթը միտում ունեցած է «Երիշասարդութիւնը արթնցնելու դէպի ազգն եւ անոր պաշտպանութիւնը», բայց «վատ անձինք» սկսած են տրտնջալ «եւ կառավարութեան պիտի մադնէին եթէ յեղափոխութիւնը իշխափ միջոցներ ծեռք չառնէր», եւ այդ վտանգին զերծ մնալու համար, խմբագիրները որոշած են դադրեցնել զայն<sup>11</sup>:

**«ՔԱԴ»:** Սեբաստիա, Երգիծաթերթ, հաւանաբար խմբատիպ, 1869 կամ 1870: Յիշուած է որ Սիմոն Պարոնեան (Սիմպար), Վառէկ-Փիլոս (Փիլիպոս Եղիա Վառեկեան), Մկրտիչ Մեծմօրութեան եւ Նազարէթ հսթամպուկեան Սեբաստիոյ մէջ միասնաբար լոյս ընծայած են Երեք թերթեր, որոնցմէ մէկն է Բաղը<sup>12</sup>:

**«ՔՊՂՐԾՈՁ»:** Սեբաստիա, Ազգային որբանոց (որ տեղակայուած էր Սեբաստիոյ մօտակայ Ս. Նշան վանքին (Անապատին) մէջ): Աշակերտական

<sup>9</sup> Ալպոմ-յուշամագրեան Էւերէկ-Ֆենեսէի, պատրաստեց՝ Խորէն Յ. Գյլըճեան, հրատ. Էվէրէկ-Ֆենեսէի Մեսրոպեան-Ռութինեան հայրենակցական միութեան Հիբանանի մասնաճիւղի, տպարան Ալթավիրես, Պէյրութ, 1984, էջ 32:

<sup>10</sup> Հուր, «Տեղական մամմվը ազատութիւնից յետոյ», Յործանք խմբատիպ կիսամսեայ հանդէս, Վան, Ա., թիւ 1, 1 Փետր. 1909, էջ 16:

<sup>11</sup> Դարոց-Դաստիարակ, խմբատիպ թերթ, Նորշէն գիտ, Ա. տարի, թիւ 1, 1 Դեկտ. 1909, էջ 2:

<sup>12</sup> Գումկան Սեբաստիոյ (Կ. Գարիկեան), «Եղեռնապարում Փոքրուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, տպ. «Հայրենիք», Պոստոն, 1924, էջ 197. Նաեւ՝ Վառեկեան, էջ 2, ուր ըստած է որ ան ծեռագիր թերթ է. նաեւ՝ Առաքել Ն. Պատրիկ (Կազմող), «Պարմագիրք յուշամագրեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան, Ա., հրատ. Համասեբաստահայ վերաշննաց միութեան-Նիւ Եռք, տպարան Մշակ, Պէյրութ, 1974, էջ 393:

ձեռագիր ամսաթերթ: Լոյս տեսած է տեղույն ազգային որբանոցի աշակերտներուն կողմէ, 1908ի օսմանեան սահմանադրութենէն ետք<sup>13</sup>:

**«ԳՐԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ»:** Տիարպեքիր, Ս. Կիրակոս վարժարան: Դպրոցական ամսաթերթ, իմնադիր-խմբագիր՝ Լեւոն Սրապեան: Հրատարակուած է Ս. Կիրակոս վարժարանին մէջ՝ «մարզարանը դառնալով բարձրագոյն կարգերու ուսանողութեան» եւ անխափան շարունակուած է չորս տարի<sup>14</sup>: Դադրած էր արդէն 1910ին:

**«ԴՊՐՈՑ»:** Սեբաստիա, Ամերիկեան Բարձրագոյն վարժարան: Աշակերտական ձեռագիր շաբաթաթերթ: Լոյս տեսած է Ամերիկեան Բարձրագոյն վարժարանի ուսանողներուն կողմէ, «1900ի ատենները»: Յունուար 1914ին դադրած էր արդէն<sup>15</sup>:

**«ԶԱՐԹՈՆՔ»:** Հայանաբար Մուշ կամ Մշոյ դաշտի գիտերէն մին լոյս տեսած, խմորատիա թերթ, 1910: Մշոյ դաշտի Նորշէն գիտի միսիթարեան հայրերու Շարգմանչաց վարժարանին կողմէ հրատարակուող Դպրոց-Դասպիտիակ խմորատիա շաբաթաթերթին մէջ լոյս տեսած է յօդուած մը որ պատասխանն է Զարթօնք խմորատիա թերթի մէկ յօդուածին, ուր խօսուած էր կրօնական պատճառներով հայ ժողովուրդը երեք մասի բաժնելու երեսոյթին մասին եւ խիստ ու հեգնական ձեւով պատասխանուած է Զարթօնքին՝ եկեղեց կաթոլիկ եկեղեցւոյ իրաւունքները պաշտպանողի դիրքերէն: Յօդուածին մէջ ակնարկութիւն կայ նաեւ այն մասին որ յօդուածագիրը գաւառացի մըն է<sup>16</sup>:

Չենք կարծեր որ խօսքը նոյն օրերուն Կ. Պոլսոյ Կեդրոնական Վարժարանին մէջ լոյս տեսնող Զարթօնք խմորատիա թերթին մասին ըլլայ, որ հրատարակուած է 1908-9ին եւ հայանական չէ որ հասած ըլլար Մշոյ դաշտ:

**«ԸՆԿԵՐԱԿԱՆ ՍԻՐՏ»:** Կարին, ձեռագիր հանդէս ամսեայ, խմբագիր՝ Յովիաննէս Շաւարչ, գործակցութեամբ Արշակի, Պ. Վարդի, Երուանդի, Արմենակի, Յարութիւն Շերնիկեանի, Մ. Գարլանեանի, Ա. Յովսէկեանի եւ Մ. Թիգելեանի: Առաջին թիւը լոյս տեսած է 1 Ապրիլ 1895ին, իսկ վերջինը, որ նրդ թիւն է, Սեպտ. 1895ին: Եղած է 24 էջանի տետրակ մը միջակ մեծութեամբ ու հրապարակած է բանաստեղծական տողեր, նամակներ եւ կարգ մը օրագիրներ<sup>17</sup>:

<sup>13</sup> Վառեկեան, էջ 2:

<sup>14</sup> Լեւոն Սրապեան, «Կեանքը գաւառին մէջ. Տիգրիսի ափերէն», Արեւելք, Կ. Պոլս, 3/16 Փետր. 1910, էջ 1:

<sup>15</sup> Վառեկեան, էջ 2:

<sup>16</sup> Դպրոց-Դասպիտիակ, Ա. տարի, թիւ 15, 13 Մարտ 1910, էջ 2-3:

<sup>17</sup> Յակոբ Շ. Վ. Քունան, Բարձր Հայք, Ա. հայր.՝ Կարին քաղաքը. գեղագրութիւն, պատմութիւն եւ սովորութիւններ, տպարան Միսիթարեան, Վիեննա, 1925, էջ 254.

**«ԹՌՈՒՑԻԿ ԹԵՐԹԵՐ»:** Կարին, թոուցիկ գաղտնի թերթ, 1896, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան Կարնոյ կենդրոնական կոմիտէի: Բաժնուած է Կարնոյ եւ գիտերու հայութեան ու անոնցմով բացատրուած է «տիրող հանգամանքներու իսկութիւնը եւ նշանակութիւնը» եւ յորդորուած է ժողովուրդը չփասիլ «եւ հաստատ հաւատք ունենալ մեր դատի յաղանակին» հանդէպ ու հրաւեր կարդացուած է ինքնապաշտպանութեան դիմած Արշաւան գիտի երիտասարդութեան «դիմադրել մինչեւ վերջ»<sup>18</sup>:

**«ՏԵՍԱԼ»:** Շապին Գարահիսար, Ազգային Վարժարան: Խմորատիպ ամսաթերթ, հրատարակութիւն Ազգային Վարժարանի Ուսանողական միութեան: Թերթին աշխատակցած են վարժարանի բարձագոյն կարգերու ուսանողներն ու ուսուցիչները: Լոյս տեսած է հաւանաբար 1908ի օսմանեան սահմանադրութենէն ետք<sup>19</sup>:

**«ԼԱՊՏԵՐ»:** Ալտաբազար: Թոուցիկ թերթ, որուն 13 Օգոստոս 1909ի թիվն մէջ հրատարակուած «Տէյիրմէնի խնդիրը. իի՞ն ցա» խորագրով յօդուածը արտատպուած է Նիկոմիդիոյ Բիլբանիա տասնօրեայ թերթին կողմէ, անոր համար որ «կրնայ տակաւին այժմէութիւն ունենալ»<sup>20</sup>:

**«ԼՈՅՍ»:** Պարտիզակ, Ամերիկեան Բարձրագոյն Վարժարան: Խմորատիպ թերթ, լոյս տեսած տեղոյն Ամերիկեան Բարձրագոյն Վարժարանին մէջ, ուսանող Միքայէլ Մինասեանի խմբագրութեամբ:

Մինասեան վարժարանին աշակերտած է 1885-89ին, այնպէս որ, Լոյս ալ տպուած պիտի ըլլայ նոյն տարիներուն:

Այս տեղեկութիւնները փոխանցող Տ. Ս. Մարտիկեան, որ նոյն վարժարանին մէջ եղած է Մինասեանի դասընկերը, Վկայած է որ օր մը վարժարանին խմորատիպ երկու թերթերուն՝ Շաբաթախօսի (խմբագիր՝ Կարապետ Թապագեան) եւ Լոյսի խմբագրական մարմիններուն միջեւ տեղի ունեցած է «ճակատամարտ» մը, որ բարեբախտաբար աւարտած է խաղաղութեամբ, առանց «վէրք տալ ստանալու»<sup>21</sup>:

նաեւ՝ Օննիկ Ճգնաւորեան, «Բարձր Հայք», ձեռագիր աշխատութիւն, Ա., ՀԱԱ, §. 420, գ. 16, գ. 9, թ. 125ա:

<sup>18</sup> «Կոտորածներից յետոյ Արշաւան գիտի կոփիը», Դրօշակ, Վիեննա, 1 Յունիս 1896, էջ 108-109. նաեւ՝ Վարդիթեր Կոճոյրգեան-Յովիաննէսեան, Զիթող Դաշտի Կարնոյ, տպարան Համազգային, Պէյրութ, 1972, էջ 141, 143:

<sup>19</sup> Արամ Հայկազ, «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, տպարան Մշակ, Պէյրութ, 1957, էջ 319:

<sup>20</sup> Բիլբանիա տասնօրեայ թերթ, հզմիտ, Ա. տարի, թիւ 19, 1 Յունիս 1910, էջ 224:

<sup>21</sup> Տ. Ս. Մարտիկեան, «1889ի ընթացաւարտ կարգին քանեւինգամեայ յոբելեանը», Պարտիզակ, տպուած Կ. Պոլիս, Զ., թիւ 11, Հոկտ. 1914, էջ 32:

Խմբագիրը աւելի ետք Միացեալ Նահանգներու (Քեմպրիճ եւ Պոսթոն, 1901-8) եւ Վանի մէջ (1913-14) խմբագրած է համանուն Երկու այլ թերթեր եւս, եւ այս մէկը հաւանաբար «նախափորձ»ը եղած է այդ Երկութին<sup>22</sup>:

**«ԼՈՅՍ»:** Ուրֆա, խմորատիպ ամսաթերթ, խմբագիր՝ Մոնոֆար Ս. Յակոբեան, լոյս տեսած 1890էն ետք<sup>23</sup>:

**«ԿՌԱՆ»:** Պարտիզակ, Ամերիկեան Բարձրագոյն վարժարան, աշակերտական թերթ, հրատարակիչ՝ Սարգիս Սարունի (Տօնկիլիկեան), երբ կ'աշակերտէր Պարտիզակի Ամերիկեան Բարձրագոյն վարժարանին, 1910: Թերթը գրուած է «Զերազի ծայրայեղ աշխարհաբարով»<sup>24</sup>:

**«ՀԱՅԱՍՏԱՆ»:** Սեբաստիա, Ս. Նշան վանք, լրագիր, խմբագիր-հրատարակիչ՝ Բարսեղ աւագ սարկաւագ Սեբաստացի (որ աբեղայական ձեռնադրութենէն ետք վերանուանուած է Պետրոս աբեղայ), 1851, «ի վախճան Մայիս ամսոյ»<sup>25</sup>: Մեր օգտագործած փաստաթուղթին համաձայն, խմբագիրը բարեկարգած է յիշեալ վանքը, հիմնած է «ընկերութիւն ուսումնականութեան» մը ու վարժարան մը ապա նաեւ այս լրագիրը:

**«ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՆՇՈՅԼՆԵՐ»:** Այնթապ, խմորատիպ կամ տպագիր երգիծաթերթ: Թերթին պատասխանատուներէն մին եղած է Յարութին Շէնեան: Լոյս տեսած է 1909ին եւ ոննեցած է կարճատեւ կեանը<sup>26</sup>:

**«ՄԱՄՈՒԼԻՆ ՁԱԳԸ ՍԵԲԱՍՏԻՈՅ ԱՐՁԱԳԱՆԳԸ»:** Սեբաստիա, «Երգիծալից յօդուածիկներ» հրատարակող ձեռագիր երգիծաթերթ, խմբագիր՝ Փիլիպոս Եղիա Վառեկեան: Լոյս տեսնել սկսած է հաւանաբար 1869ին կամ 1870ին, մօտ 20 թիւ: Նախ կրչուած է «Մամուլին Զագը» եւ լոյս տեսած է Աւտիս Շահինեանի խմբագրութեամբ, ապա փոխանցուելով Փիլիպոս Եղիա Վառեկեանին, վերանուանուած է այս անունով: Կ'ենթադրով որ ասոնց շարունակութիւնն է Ալիս թերթը<sup>27</sup>:

<sup>22</sup> Պարտիզակ, Զ. տարի, Հոկտեմբեր 1914, թիւ 11, էջ 32:

<sup>23</sup> Արամ Սահակեան, (աշխատասիրեց), Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, հրատարակութիւն Ուրֆայի յուշապատումի յաձնախումբին, տպարան Ատլաս, Պէյրութ, 1955, էջ 309:

<sup>24</sup> Պարտիզակը խափուսիկ, յանդուածաբար՝ Մանուշակ եւ իր հեքեաթները, Յակոբ Տէր-Յակոբեան, տպարան Տէր Յակոբեան, 1960, էջ 119:

<sup>25</sup> Աւրդան Վրդ. Օձնեցիի 23 Յունիս 1851 թուակիր նամակը, Սեբաստիոյ Ս. Նշան վանքէն Կ. Պոլսոյ Պատրիարքին («Աստուածարեալ քահանայապետ հայր հասրակաց»)՝ ՀԱԱ, ֆ. 439, ց. 3, գ. 34, թ. 3:

<sup>26</sup> Գրիգոր Պողարեան, «Այնթապացիներու տուրքը տպագրութեան, հայ մամուլին, հայ գրականութեան եւ հայ մշակոյթին», Այնթապականք, Ա. հղո., տպարան Ատլաս, Պէյրութ, 1974, էջ 11 եւ 44:

<sup>27</sup> Վառեկեան, էջ 1-2:

**«ՄԱՆՐ ԵՐԳԵՐ»:** Կարին, կիսամսեայ ձեռագիր բանաստեղծական հանդէս, խմբագիր-հրատարակիչներ՝ Քէչեան եւ Հէյրանեան: Առաջին թիւ լոյս տեսած է Մայիս 1895ին, որուն յաջորդած է Երկրորդ թիւ մը միայն, տեսրի ձեւով: Հրապարակած է միայն ոտանաւոր գրութիւններ ու երգեր եւ «Անծանօթ պապճառներ՝» անդարակոյս ժամանակին պիրած երկիրէն սղիպեալ՝ կը դադրեցնեն եւ նաեւ կը պապուն գրածնին»<sup>28</sup>:

**«ՄԻ ՍԻՐՏ ԵՒ ՄԻ ՀՈԳԻ»:** Կարին, ձեռագիր ամսաթերթ, հրատարակութիւն մօտ տասը երիտասարդներու, մօտաւորապէս՝ 1895ին: Ունեցած է կարճատեւ կեանք ու դադրած է քաղաքին մէջ տիրող վախի մթնոլորտին հետեւանքով<sup>29</sup>:

**«ՃԱԲԱԹԱԽՈԾ»:** Պարտիզակ, Ամերիկեան Բարձրագոյն վարժարան, խմորատիպ թերթ: Լոյս տեսած է տեղյոյն Ամերիկեան Բարձրագոյն վարժարանին մէջ, ուսանող Կարապետ Շապագեանի խմբագրութեամբ, որ վարժարանին աշակերտած է 1885-89ին, այնպէս որ, թերթն ալ լոյս տեսած պիտի ըլլայ այդ տարիներուն:

Այս տեղեկութիւնները փոխանցող Տ. Ս. Մարտիկեան, որ նոյն վարժարանին մէջ եղած է Շապագեանի դասընկերը, վկայած է որ օր մը Վարժարանին խմորատիպ երկու թերթերուն՝ Շաբաթախոսի եւ Լոյփի (խմբագիր՝ Միքայէլ Մինասեան) խմբագրական մարմիններուն միջեւ տեղի ունեցած է «ճակատամարտ» մը, որ բարեբախտաբար աւարտած է խաղաղութեամբ, առանց «վէրք տալ ստանալ»ու<sup>30</sup>:

**«ՈՒՐՖԱ»:** Ուրֆա, խմորատիպ հանդէս, հրատարակիչ՝ Ուրֆայի Երկսեռ Երիտասարդաց Միութիւն, 1919:

Նոյն միութիւնը միաժամանակ կարավարած է տեղյոյն լսարանը ու նպատակ ունեցած է հիմնելու ընթերցասուն մը<sup>31</sup>:

**«ՊԱՏԱՆԻ»:** Մեզիրէ, Ֆրանչիսկեան հայրերու ֆրանսական վարժարան, խմորատիպ թերթ, հրատարակուած Ֆրանչիսկեան հայրերու ֆրանսական վարժարանի աշակերտութեան կողմէ, որոնց «ոեկավար»ը եղած է Յարութիւն Շապութեան<sup>32</sup>, իսկ այլ տեղ յիշուած է որ թերթը հրատարա-

<sup>28</sup> Քօսեան, էջ 254. նաեւ՝ ճգնաւորեան:

<sup>29</sup> Քօսեան, էջ 254-55. նաեւ՝ ճգնաւորեան:

<sup>30</sup> Մարտիկեան, էջ 31-32:

<sup>31</sup> ՀԲԸՄիութեան պատուիրակ Դափիթ Աղամեանի 25 Նոյեմբեր 1919 թուակիր ձեռագիր տեղեկագիրը, յղուած Ուրֆայէն՝ ՀԲԸՄիութեան Կեդրոնական Վարչական Ժողովին, Գահիրէ, էջ VII:

<sup>32</sup> Յովիկաննէս Տէր Յովիկաննէսեան, Օրեր որ պիտի չմողոցուին. յուշեր ազգային գործիչի մը կեանքէն, Վենետիկ-Ս. Ղազար, 1974, էջ 60:

կութինն է «Ֆրանսական Գոլեմի Հնչակեան Ուսանողական Միութեան»<sup>33</sup>: Հրատարակութեան աշխատանքներուն մասնակցած է վարժարանի աշակերտներէն Յովհաննէս Տէր Յովհաննէսեան, որ անոր 1912ի թիւթէն մէկուն մէջ լոյս ընծայած է իր առաջին բանաստեղծութիւնը<sup>34</sup>:

Պարանիի մէջ Մեզիրէի գերմանական գոլեմ-որբանոցի սաներէն Յովհաննէս Ժամկոչեան (Եղբայրը՝ բանասէր-մանկավարժ Բենիամին Ժամկոչեանի) ունի ոտանաւոր մը՝ «Ամու՛ր բռնէ ճշմարտութեան հաստատուն վէմը» խորագրով: Ժամկոչեան նկարած է նաեւ փոթորկոտ ծով մը եւ ընկղմելու մօտ նաև մը, որուն մէջէն պատանի մը երկարած է ձեռքը ցցուած ապառաժի մը: Նկարին տակ գրուած է «Ամու՛ր բռնէ ճշմարտութեան հաստատուն վէմը»<sup>35</sup>:

**«ՍՈՒԱԿ»:** Մարզուան, Անաթոլիա Գոլեմ, աշակերտական խմորատիպ թերթ: Մեծանուն բանաստեղծ Միսաք Մեծարենց անոր մէջ հրատարակած է իր կարգ մը բանաստեղծական փորձերը, երբ կ'աշակերտէր նոյն Գոլեմին<sup>36</sup>: Մեծարենց Գոլեմ յաճախած է 1899-1901ին:

**«ՄՐԻՆԳ»:** Սեբաստիա, Ս. Նշան վանքի Ազգային որբանոց (որ տեղակայուած էր Սեբաստիոյ մօտակայ Ս. Նշան վանքին (Անապատին) մէջ): Աշակերտական ձեռագիր ամսաթերթ: Լոյս տեսած է որբանոցի աշակերտներուն կողմէ, 1908ի օսմանեան սահմանադրութենէն ետք<sup>37</sup>:

**«ՎՈՍՓՈՐ»:** Կարին, քաղաքական, գրական եւ հանրային ձեռագիր ամսօրեայ հանդէս: Տէր եւ հրատարակիչ՝ Երուանդ Եազրճեան, գործակցութեամբ Ղ. Գրգոյեանի, Մելքոն Կիլրեանի, Լ. Գագիկի եւ Գ. Գոգիէսի: Բ. Թիւէն ետք տէր եւ հրատարակիչ՝ Ղ. Գրգոյեան: Առաջին թիւլ լոյս տեսած է 1 Յունուար 1896ին, վերջինը՝ 1 Ապրիլ 1896ին, ընդամէնը 4 թիւ, միասնաբար 98 էջ, հետեւաբար իրաքանչիւր թիւ բաղկացած պիտի ըլլայ մօտ 24 էջերէ: Եղած է փոքր տետր մը որ իր երկրորդ թիւէն ետք հրապարակած է «Տեղական ոգոյն յարմար նիւթեր»: Առաջին թիւլ ունեցած է հետեւալյօդուածները. «Թուրքերը եւ հայերը», թրգմ.<sup>38</sup> Եր. Եազրճեան: «Մեռեալ սիրուիին», թրգմ. Եր. Եազրճեան: «Դէմքդ եւ սիրտդ», Մ. Կիլրեան: «Զմեռ գիշեր մը», Էպառա: «Զուարճալիք», թրգմ. Եր. Եազրճեան: «Քաղա-

<sup>33</sup> Յուշարձան ուսուցապետ Բենիամին Ժամկոչեանի, հրատ. Պէյութի Սահակեան վարժարանի նախկին սաներու, Երեւան, Երեւան, ՎՄՎ-Պրինտ, 2010, էջ 152:

<sup>34</sup> Յովհաննէս Տէր Յովհաննէսեան, էջ 60:

<sup>35</sup> Յուշարձան ուսուցապետ, էջ 152:

<sup>36</sup> «Միսաք Մեծարենց թուականներով եւ թիւթով», Բագին, Պէյութ, Նոյ.-Դեկտ. 1986:11-12, էջ 6-7:

<sup>37</sup> Առուկեան, էջ 2:

քական», «Ազդ խմբագրութեան»: «Մեր մեռեալները», թրգմ. Եր. Եազըճ-եան եւ «Հուարձալիք», Ղ. Գրգոյեան<sup>38</sup>:

**«ՏԻԳՐԻՍ»:** Տիարպեքիր, խմորատիա ամսագիր, լոյս տեսնել սկսած է 10 Ապրիլ 1910ին: Աւելի ետք միաձովուած է տեղոյն Յոլքեր կիսամսեայ խմորատիա թերթին հետ եւ նոր թերթը վերածուած է շաբաթաթերթի, «Տիգրիս» անունով<sup>39</sup>, որ պաշտօնապէս արտօնուած է կառավարութենէն<sup>40</sup>: Նոր Տիգրիս շաբաթաթերթէն մեր տեսած առաջին՝ Ա. տարուայ 5րդ թիւ կը կրէ 2 Օգոստոս 1910 թուականը, այնպէս որ պիտի ենթադրել որ այս Տիգրիսին ու Յոլքերուն միաձովումը տեղի ունեցած է 1910ի Յուլիսի վերջերուն:

Օրին Տիարպեքիրէն յդուած թղթակցութեան մը մէջ այս թերթին մասին ըստուած է հետեւեալը. «...Ո՞րքան իր անունով, նոյնքան իր բովանդակութեամբ կը սիրենք յուսալ թէ պիտի համապատասխանէ այս վերջինն ալ միջավայրին բազմապիսի պէտքերուն»<sup>41</sup>:

**«ՓԱՐՈՍ»:** Կարին, շաբաթաթերթ, տպագրուած «բազմատիա զանգուած»ով (Polycopie-խմորատիա), հրատարակութիւն դաշնակցական խումբի պատկանող Երիտասարդներու ու եղած է կուսակցական օրկան: Առաջին թիւ տպուած է 7 Մարտ 1909ին, Երկրորդը՝ 14 Մարտ 1909ին, իրաքանչիւրը 6-8 թերթ (12-16 էջ), գինը՝ 1 դահեկան: Ունեցած է կարճատեւ կեանք, հրատարակուած է ընդամէնը քանի մը թիւ: Թերթին նպատակը եղած է.

Ա. Տալ բուն ժողովուրդին ներկայ քաղաքական հարցերուն լուսաբանութիւն:

Բ. Թերթի միջոցաւ կոուիլ զանազան մոլութիւններու դէմ:

Գ. Երիտասարդութիւնը հրափրել ինքնաճանաչութեան եւ ինքնագործունելութեան:

Դ. Տեղ տալ զանազան հայագէտներու օգտակար գրութիւններու եւ զարգացուցիչ թարգմանութիւններու:

Ե. Պարզել ներկայիս գոյութիւն ունեցող կուսակցութիւններու սկզբունքները եւ այլն ընկերական եւ գրական յօդուածները:

Փարոսի Բ. թիւը նուիրուած է Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին՝ կեանքին եւ յեղափոխական գործունէութեան, առաջին էջին ունենալով անոր պատկերը:

<sup>38</sup> Քուեան, էջ 254-55. նաեւ՝ Ծգնաւորեան, թ. 125ա-բ:

<sup>39</sup> Մ. Ա. Բաբլոյեան, Հայ պարբերական մամուլը. մակենագիրական համահաւաք ցուցակ (1794-1980), ԳԱ հրատ., Երեւան, 1986, էջ 85, թիւ 626:

<sup>40</sup> Սրապեան, «Տիգրիսի Ափերէն», Արեւելք, 15/28 Յուլիս 1910, էջ 1 եւ 22 Մայս/4 Յունիս 1910:

<sup>41</sup> Սրապեան, «Տիգրիսի Ափերէն», Արեւելք, 22 Մայս/4 Յունիս 1910, էջ 2:

Թերթին աշխատակիցները հանդէս եկած են կեղծանուններով՝ Կայ-  
ձակ, Հ. Փայլատակ, Յօն, Խանո-Ֆարիատ, Գիակ են.<sup>42</sup>:

## NEWLY FOUND NAMES OF PROVINCIAL ARMENIAN PRESS PERIODICALS

(Summary)

MIHRAN MINASIAN (mihran.min@gmail.com)

The paper uncovers the names of and gives certain information about 35 new Armenian provincial periodicals published between 1851 and 1922 in the various towns of Western Armenia, Cilicia and Asia Minor, towns like Adapazar, Aintab, Bardizag, Cesarea, Diarbekir, Fenese, Garin, Mezire, Ourfa, Sepasdia, Shabin Karahisar, Tamzara, Van, etc.. These periodicals are not mentioned in Armenian bibliographical lists.

Adding these new-found names to the previous two articles on the same subject by the same author in the *Haigazian Armenological Review* Volume 9 (1981) and volume 21 (2001) brings the total number of periodicals uncovered by this author to 101. However, unlike in the first two articles the names mentioned in this paper are of provincial periodicals, which is further evidence of the budding cultural richness in Armenian provincial towns.

---

<sup>42</sup> Քուեան, էջ 256-57. Նաեւ՝ Շգնաւրեան, թ. 125թ-126ա:

